ԿԱՐԾԻՔ

Հ. Ս. Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր աշակերտների մոտ ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» 13.00.03 «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հ.Ս. Սարգսյանի գրախոսվող գիտական աշխատանքը նվիրված է հատուկ մանկավարժության տեսության և պրակտիկայի կարևոր և արդիական խնդիրներից մեկին՝ մտավոր հետամնաց աշակերտների մոտ ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացմանը: Հեղինակը ընտրել է այդ խնդրի լուծման համար գրեթե չուսումնասիրված ուղղություն, օրինակելի ծրագրի, հատուկ մանկավարժական պայմանների և մոտեցումների, մոդելային իրավիճակների օգտագործումը թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացությամբ երեխաների մոտ կենսական կարևորություն ունեցող գործունեության ոլորտներում ինքնասպասարկման զարգացման համար :

Ուսումնասիրվող խնդրի արդիականությունը որոշվում է նաև նրանով, որ ընդհանուր մանկավարժության մեջ կիրառվող մոտեցումները երեխաների մոտ ինքնասպասարկման զարգացման համար հաճախ անընդունելի են լինում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար, իսկ գործնականում կիրառվող միջոցները և մեթոդները հանդիսանում են ուսուցիչների և դաստիարակների սեփական գիտելիքների և անձնական փորձի արդյունք: Հետևաբար այս խնդրի տեսական և գործնական առումով ոչ բավարար չափով մշակված լինելը նվազեցնում է գործնականում անցկացվող աշխատանքի արդյունավետությունը: Այս առումով հատուկ մոտեցումների, օրինակելի ծրագրի և պայմանների մշակումը ինքնասպասարկման զարգացման համար գործունեության տարբեր տեսակներում թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացությամբ սովորողների մոտ հանդիսանում է բավականին արդիական, տեսականորեն, գործնականորեն և սոցիալապես նշանակալի:

Գրախոսվող ատենախոսությունը շարադրված է համակարգչային տեքստի 131 էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Երեխաների տվյալ կոնտինգենտի հետ աշխատանքի բազմամյա փորձը և տեսական պատրաստվածությունը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների դաստիարակման, ուսուցման և զարգացման հարցերում թույլ են տվել Հ.Ս. Սարգսյանին գիտական պատշաճ մակարդակով կազմակերպել և անցկացնել սույն

հետազոտությունը, որոշել հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածն ու խնդիրները, ընտրել հետազոտության ժամանակակից մեթոդներ:

Այս ամենը բնութագրում է հայցորդին որպես կայացած գիատական աշխատողի և փորձառու մանկավարժի:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է տարբեր տեսակի դպրոցներում մտավոր հետանաց երեխաների ինքնասպասարկման զարգացման նպատակով կատարվող աշխատանքի դրվածքի տեսական վերլուծության մեջ, դիտարկվող հարցերում ուսուցիչների, դաստիարակների և ծնողների տեղեկացվածության աստիճանի որոշման մեջ, այս երեխաների մոտ ինքնասպասարկման գործնական կարողությունների և հմտությունների բացահայտման մեջ, ինչպես նաև այս սովորողների մոտ ինքնասպասարկման զարգացման համար տեսական մոտեցումների, օրինակելի ծրագրի, մոդելային իրավիճակների մշակման մեջ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը որոշվում է ինչպես մտավոր հետամնաց երեխաների ինքնասպասարկման զարգացման նպատակով կատարվող աշխատանքի դրվածքի տեսական վերլուծությունով, առաջադրված խնդիրների լուծման համար առաջարկվող ծրագրերի, մանկավարժական մոտեցումների և պայմանների արդյունավետության տեսական հիմնավորումով, այնպես էլ երեխաների տվյալ կոնտինգենտի մոտ ինքնասպասարկման զարգացման համար տեսական դրույթների և օրինակելի ծրագրի մշակումով և ներդրումով: Սույն հետազոտության նյութերը կլրացնեն հատուկ մանկավարժության տեսության և մեթոդիկայի հիմնարար դրույթները նոր տեսական տեղեկություններով:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովված է իրականացվող աշխատանքի երկարատևությամբ, մասշտաբով և ծավալով, ժամանակակից և հատուկ մանկավարժության մեջ լայնորեն օգտագործվող հետազոտության մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև դպրոցական պրակտիկայում հետազոտության արդյունքների ներդրմամբ: Ատենախոսության հիմնական տեսական և գործնական դրույթների հավաստիությունը և հիմնավորվածությունը որոշվում է նաև հեղինակի հրատարակություններով, ելույթներով և ստացված տվյալների լայն քննարկումներով:

Գրախոսվող աշխատանքի վերլուծությունը վկայում է, որ հայցորդը ցուցաբերել է ինքնուրույն և պատշաճ մակարդակով արդիական, ժամանակակից, կարևոր գիտական խնդիրներ որոշելու և լուծելու, խորապես և բազմակողմանի վերլուծելու և պատշաճ մակարդակով հետազոտության ստացված արդյունքները մեկնաբանելու կարողություն:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող ատենախոսությունը, կցանկանայինք նաև նշել որոշ դիտարկումներ.

1. Ինչպես ատենախոսության, այնպես էլ սեղմագրի մեջ հեղինակը հիմնական սկզբունքների և դրույթների մեջ բավականին հստակ չի նշել մտավոր հետամնացությամբ երեխաների մոտ ինքնասպասարկման զարգացման համար խաղերի կիրառման տեսական և մեթոդոլոգիական հիմունքները:

2. Աշխատանքում ոչ բավական չափով են բացահայտված թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ընտանեկան պայմաններում ինքնասպասարկման դաստիարակման և զարգացման հանդեպ մոտեցումները:

3. Աշխատանքը կշահեր, եթե չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ ինքնասպասարկման զարգացման հարցերի ուսումնասիրության հետ մեկտեղ դիտարկվեին դրանց զարգացման հանդեպ մոտեցումները նաև մտավոր հետամնացության ծանր և խորը աստիճան ունեցող երեխաների մոտ:

Նշված նկատողությունները ընդհանուր առմամբ չեն նվազեցնում Հ.Ս. Սարգսյանի կատարած ատենախոսական աշխատանքի արժեքը, դրա տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը: Սույն հետազոտությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք, որում բացահայտված է տեսական հիմնավորումը, օրինակելի ծրագիրը, մանկավարժական մոտեցումները և պայմանները կենսական կարևորություն ունեցող գործունեության ոլորտներում ինքնասպասարկման զարգացման համար թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող կրտսեր աշակերտների մոտ:

Սեղմագիրը և գիտական հրատարկությունները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ ընդհանուր

Եզրակացությունը

Հետազոտության թեմայի արդիականությունը, դրա նորույթը, տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը, ինչպես նաև ստացված տվյալների հավաստիությունը և հիմնավորվածությունը, արդյունքները, տեսական ու գործնական եզրակացությունները թույլ են տալիս համարել, որ Հասմիկ Սերգեյի Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր աշակերտների մոտ ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» ատենախոսական աշխատանքը հանդիսանում է ավարտուն ինքնուրույն գիտական աշխատանք, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի 13.00.03 «Հատուկ մանկավարժություն, (Օլիգոֆրենոմանկավարժություն)»

մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Հայցորդը արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Լոգոպեդիայի և վերականգնողական
թերապիայի ամբիոնի վարիչ,
բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս.Վ. Գրիգորյան

Պրոֆեսոր Ս.Վ. Գրիգորյանի ստորագրությունը
<u>հաստատում եմ</u>

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտքարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
Դոցենտ Մ. Իսպիրյան

9.10.2020թ.